



ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ԿՅԱՆՔ

ԿՈՄԻՏԱՍԻ ԳՈՐԾԵՐԵՆ ՆՈՐ ԳԱՆՁԵՐ ԵՐԵՎԱՆ ՀԱՆՎԱԾ ԵՆ

Կիրիկիո Կաթողիկոսը հայ օրագրողներուն հայտնած է, թե Երուսաղեմ իր վերջին այցելության ընթացքին ձեռք անցուցած է Կոմիտաս վարդապետի գործերն մինչև հիմա անտիպ մնացած երգեր, իր ձեռագրով տեսարաններ, թղթիկներ, ցանուցիր նոթագրություններ խազերու մասին և ժողովրդական երգերու հավաքագրություններ, որոնք գրված են հայկական ձայնագրության մը: Այդ երգերն 45 հատը Կաթողիկոսը ընդօրինակել տված է տպագրության հանձնելու համար: «Ինձի համար ասոնք մեծ գանձեր են, — ըսած է անիկա, — Կոմիտասը

հավաքած էր շուրջ 2000 եղանակներ, բայց անոնց մեկ փոքր մասը ծանոթ է մեզ, մեծ մասը կորսուած է, կկարծեմ թե անոնց մեծ մասն ալ տակավին Պոլսո մեջ կգտնվի, ղանազան անհատներու մոտ: Մեծ գանձ է սա, այս թուղթերու ծրարը ես կղրկեմ հայրենիք»:

Կաթողիկոսը հայտնեց նաև թե իր Երուսաղեմ վերջին այցելությունը եղած էր բազմազան արդյունավոր. ան պրպտած էր հին ձեռագիրներ, ուսումնասիրած մանրանկարչական գործեր և նկարել տված կարգ մը գունավոր նմուշներ, որոնք ցույց տված է ներկաներուն:

(«Ժողովուրդ» թիվ 947)

ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՆՈՐ ՍՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ս. Օծուխուն Վեհափառ Գարեգին Կաթողիկոսին երկու երկասիրությունները — «Դէպի լույս և կեանք» ու «Աշուղական խա-

ղեր» լույս տեսած են Անթիլիասի տպարանին:

(«Արևմուտք» 2 նոյեմբեր, 1947 թ.)

ԻՐԱՆԱՀԱՅՈՒ ՍԸ ՆՎԵՐԸ Ս. ԷԶՄԻԱՍՏԻՆ

Իրանահայ գաղութեն Պ. Ռուբեն Դանիելյան քսանհինգ հազար ըրիս հանձնած է Առաջնորդ Ռուբեն Ա. Հոր, հատկացնելու համար Կաթողիկոսական ոսկյա զավազանի մը շինությանը: Բաց աստի, հարգելի նվիրա-

տուն յոթը հազար ըրիս նվիրած է էջմիածնի ճեմարանի սաներուն համար և 18 հազար ըրիս ալ Թեհրանի Դավիթյան վարժարանի անօգն աշակերտության:

(«Արաբա» 8 նոյեմբեր, 1947 թ.)

ԴԵՊԻ ԷԶՄԻԱՍՏԻՆ

Օղբ անձրևոտ է: «Ինթուրիսթ»-ի մայր դուռին ըով կսպասենք ինքնաշարժին, որ էջմիածին պիտի տանի մեզ:

«Հաղթանակի կամուրջ»-են մեր փառքալ առֆալտապատ ուղին, որ ծառերով եղբրված էր իր ամբողջ երկայնքին: Ճամբային երկու ըովերը կան հայրենադարձներու համար արդեն պատրաստ ու դեռ շինվող տուներ:

Բաց դաշտին վրա հիմա անշարժացած

են ավերակները Զվարթնոցին, որ իր մեջ կմարմնավորե մեր նախահայրերուն հավատքը, մեր փառավոր անցյալը և հայ ճարտարապետության հրկնասլաց գեղեցկությունը:

Անձրևը կշարունակե իջնել: Մենք կապալինինք մուտքի կամարներուն ներքև: Երկու կողմերուն վրա կտարածվին կաթողիկոսներու դամբարանները՝ կողք կողքի,

մարմարյա ընդհանուր սավանի մը տակ:
Վարդապետ մը կբանա Տաճարին դուռը
և կառաջնորդի մեզ:

Որմերը զարդանկարված են արժեքավոր
աշխատություններով:

Կերթանք խույ մը, ուր պահված են մա-
սունքներ ու թանկարժեք իրեղեններ: Կան
կաթողիկոսներու թագեր ու գավազաններ,
վարագույրներ, ինչպես նաև արծաթե կամ
ոսկիե զանազան առարկաներ: Հիսուսի խա-
չափալստեն մասնիկ մը պահված է մասնա-
վոր տուփի մը մեջ:

Վեհարան կբարձրանանք համարաքայլ:
Մեզ կընդունի Վեհափառը, պատկառելի
իր անձնավորությամբ: Անոր խոսքերը խո-
րունկ իմաստ մը կպարփակեն իրենց մեջ:
Ան չի կրնար հիմա հայ ժողովուրդի միաս-
նականությունն և մեր եկեղիսն մեջ անոր ամ-
փոփվելն տարբեր բանի մասին խորհիլ:
Իրեն համար չկա ավելի մեծ ձևանարկ քան
հայրենադարձը: Հնարավոր բոլոր միջոց-
ներով հարկ էր նպաստել անոր:

Վեհափառը լավատես է հողային մեր
պահանջներուն նկատմամբ: Ան կհավատա

թե շնորհիվ Սովետական հզոր Միության,
կարելի պիտի ըլլա վերստանալ մեզմե հա-
վիշտակված հողերը: Կարծես իր խոսքերուն
որպես եզրակացություն ան ըսավ թե եկե-
ղեցին ծառայել ու ծառայում է հալ ժողո-
վուրդին և անոր հայրենիքին:

Վեհարանի Մաղկյա դահլիճին մեջ պահ-
ված է Կոմիտասի դաշնամուրը, որուն վրա
ան վերջնական ձև տվավ մեր գեղջկական
երգերուն ու դաշնավորեց զանոնք:

Իրկար պահ մը կդիտեմ շուրջս:

Է.Ջ.Մ.Ի.Ա.Մ.Ի.Ն... Մեր դարավոր հավատքին
խարխալը: Ան լուծված էր հալ ժողովուրդին
մեջ: Նրկար դարեր ան մեր գոյության
խորհրդանիշն դարձած էր, որովհետև զրկը-
ված էինք պետությունն, որովհետև կհեծնինք
բարբարոսներու լուծին ներքե:

Է.Ջ.Մ.Ի.Ա.Մ.Ի.Ն... Ոմանք մորթնեցին զայն
Պարսկաստան փոխադրել: Բայց ան քարն,
ձևն ու քանդակն ավելի կապրեր սիրտերուն,
հոգիներուն խորը, որպես հավատք, որպես
տեսիլք ու աղոթք, և ոչ ոք կրնար տեղահան
ընել զայն:*)

ՍՄՐԱՏ ՏՆՐՈՒՆՅԱՆ

ԱՆԳՆԵՐՆ ԳՐՈՂ ՀԱՅ ԿԻՆԵՐ

Օր. Զապել Թահմիզյան հողված մը հրա-
տարակած է «ՏՏՐ Ինկիլ լիֆլեթ» պարբե-
րաթերթին մեջ, «Անգլերեն գրող հայ կիներ»
վերտառությամբ. որուն մեջ հեղինակը
կհայտարարե, թե հայեր 20-րդ դարու մեջ
սկսած են անգլերեն գրել և իբրև այս լեզվով
գրող ծանոթ գրագետներ արտագրել, որոնցմ
միայն կհիշեն Մայքլ Արլենի, Ուիլիամ Սարո-
յանի, էմմանվել Վադդանյանի, Ճոն Բոլ
Կարլսոնի, Բիչարտ Հակոբյանի և Լևոն
Սյուրմեյլյանի անունները:

Խոսելով անգլերեն գրող հայ կիներու մա-
սին, Օր. Թահմիզյան մասնավորապես կհի-
շատակե հետևյալ անունները— Դիանա Ա-
ղաբեկ Աբգար, Զապել Կ. Պոյաճյան, Միլյա
Նորման, Թիմարա Թեկուրճ, Արմենուհի
Թաշճյան Լեմույս, Սիրարփի Տեր-Ներսիս-
յան և Նորա Պալաքյան: Ասոնցմե ավելի
մասնավորաբար կխոսի առաջին շորսի մա-
սին:

Դիանա Աղաբեկ Աբգար, ծնյալ 1860-ին,
մեծահարուստ և միջազգային առևտրական
ու մարդասիրական համբավ վայելող հոր մը
զավակն է: Ան երկար տարիներ ապրած է
Ճարոն և առաջին համաշխարհային պատե-
րազմին ետքը անուանված էր հոն առաջին
կին հյուպատոսը: Անոր գրական գործերը
կարելի է բաժնել երկու որոշ խումբերու, ո-
րոնցմե առաջինը կներկայացնե «Հազար

պատմություններ», որ կարճ ու հետաքրքրա-
կան պատմվածքներու և բանաստեղծու-
թյանց ժողովածու մըն է «Մուսա Տաղի քա-
ռասուն օրեր»-ուն պես: Այս կարգին է «Մե-
նավոր խաչակիրը» որ իբր աշուղ ծաղված
պալատ կմտնե աղառելու համար հայ աղ-
ջիկ մը:

Դիանա Աբգարի գործերուն մեծագույն
մասը արձակով գրված է և քաղաքական ու
ընկերային բնույթ մը ունի: Ան գրած է «Խա-
ղաղության հարցը» (1912), «Կայսերապաշ-
տություն և օրենք», «Եվրոպայի խաղաղու-
թյունը» և այլն, որոնց մեջ կարտահայտի իր
բուռն սերը Հայաստանի, արդարության և
աշխարհի խաղաղության մասին:

Օր. Թահմիզյան անգլերեն գրող գրագետ
կիներն երկրորդը կհամարե Միլյա Նորման,
որուն Մարի Շելլի մասին գրած գործը՝ «Մա-
րի Շելլի, նորավերապիր և թատերագիր»,
լույս ընծավվեցավ 1934 և 1939 թվականնե-
րուն, Օքսֆորդի համալսարանի մամուլին
կողմի:

*) Բանաստեղծ Մարտին Տերունյանը 1946 թվի աշ-
նանը Կիպրոսից Սովետական Հայաստան ժամանելով
մտածակցել է Հայաստանի Սովետական Դրոշմի հա-
մադրամբին: Վերը բերած հատվածը վերցրել ենք նրա
«Սովետական Հայաստանի մեջ» ընդհանուր խորագիրը
կրող հոդվածաշարից, որը շարունակաբար տպագրվում
է Կիպրոսի «Նոր Արթուր» թերթում: ԽՄԲ.

Թիմարա Թեկուրճ քաղաքորնացի մըն է, որ կգրե արձակ և ոտանավոր, հայերեն և անգլերեն, էմիլի Տիքընստընի պես, սիրտ, մոլորումի, հավատքի, ցավի հաճույքի և ցավոտ մտերմության մասին, պատկերավոր և պերճ լեզվով: Օր. Թաճիկյան հատվածներն առաջ բերելով անոր գրություններն կաշխատի վերլուծել անոր գրական կարողությունները:

Ան կխոսի նաև Զապել Պոյաճյանի մասին, որ ծանոթ է իբր նկարիչ և գրագետ և որուն գործերն կհիշվի «Հայ առասպելներ և վեպեր» (1916) և «Կիլիկիամեջ» (1924), որ

անկից ետքը գրած է հունական առասպելներու և գեղարվեստի մասին ուսումնասիրություն մը և «Էջմիածին» թատերգությունը:

Անշուշտ վերահիշյալ գրագետներն զատ կան Անգլիա, Ամերիկա և այլ անգլերեն խոսող երկիրներու մեջ ուրիշ գրագետներ, որոնք անգլերենին կատարելապես կտիրապետեն և հոգվածներ ու գիրքեր կգրեն:

Մեր ուշագրությունը մասնավորաբար կհրավիրեն այն հայ գրագետներն ու բանաստեղծները, որոնք միջազգային համբավ կվայելեն, Մայքլ Արլենի մը կամ Ուիլիըմ Մարոյանի մը նման:

(«Ժողովուրդի ձայն» թիվ. 1468)

ՕՆՆԻԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ ՆՎԱԳԱՆԱԴԵՍԸ

Օննիկ Պերպերյանի տարեկան նվագահանդեսները Փարիզահայ գաղութին համար, ի մասնավորի հայ արվեստի մշակման տեսակետեն, շահեկանություն ունեցող զեպք մըն են եղած միշտ: Արդարեւ, ազգային երաժշտական ոճի մը, կամ զպրոցի մը մարմին տալու նպատակը հետապնդող հայ երգահաններուն կարգին Օ. Պերպերյան, մինչև հիմա իր արտագրած լուրջ գործերուն շնորհիվ անտարակույս կարևոր դիրք մը կգրավե արդեն:

Ստեղծագործական կանոնավոր ուղեգծի մը հետեւելով, ան ասկե առաջ տվաւ, իբր սեմֆոնիք գործ, «Հերոսի կյանք»-ը, «Հայկական Համակագ»-ը, ինչպես նաև բոլիֆոնիք «Պատարագ»-ը, և այլն:

Հառաչիկա նոյեմբեր 30-ին Սալ Կավոյի մեջ իր գործերուն նվիրված նվագահանդեսին հալտագրին մաս կկազմե իր մեկ նոր և կարևոր հեղինակությունը՝ «Հայկական Քոնչերթո»-ն, գրված դաշնակի և նվագախմբի համար, ինչպես նաև նույն «Պատարագ»-ը, այս անգամ մեծ նվագախումբի համար վերատին աշխատասիրված ձևին տակ:

Սույն նվագահանդեսին կմասնակցին շնորհալի երգչուհի օր. Կարին Իշկալացյան (լորենադ Փարիզի քոնսերվատորան), հանրածանոթ դաշնակահար էմիլ Բասանի, վերսալի քուարթետը և Լամուրեո նվագախումբը:

(«Արևմուտ» 23 նոյեմբեր 1947 թ.)



Օ. Պերպերյան

ԱՅՑ ՍԸ Ս. ՂԱԶԱՐԻ ՎԱՆՔԻՆ՝ „ԲԱԶՄԱՎԷՊ“-Ի 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վանքը, հոկտեմբերյան այս ամսուն է աշնանային խորունկ գույներու և մեջ, խորհրդավոր գեղեցկությունը զգեցած բույրերու կախարդանքին, դեռ կարմիր